Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ ԹԻՎ 90, 91 ԵՎ 101 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 90 որոշման 1-ին կետում «Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրի 1-ին փողոցի երեք տների բնակիչներին՝ գազամատակարարում ապահովելու համար» հատկացված գումարի չափը նշված չէ:

Թիվ 91 որոշման N 2 հավելվածում «Բնակարանային շին. և կոմունալ ծառայություն» 6-րդ տողի «Փաստացի 3-րդ եռամսյակ» և «%» սյունակներում նշված «127331.2» և «100.4» թվերը համապատասխանաբար փոխարինել «107156.1» և «84.5» թվերով:

Թիվ 101 որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին կատարված հղումը սխալ է: ««Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «1-ին մասի» բառերը, իսկ որոշման հղման վերջին պարբերությունում «որոշման 23-րդ կետի գ) ենթակետի» բառերը փոխարինել «որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության» բառերով: